

գէն մեռած էր Պետրոսը: Աստուածատուրը գրուած է Պետրոսին իբրև խօսակեաց, առաքինի, գըթած, անընչասէր եւ հիւրընկալ մի մարդ, օրինակ հանգիստանալով իւր միաբաններին համար. «զի որ զկնի նորա էաք ի նա ամենքեան նկրտէաք. եւ թէպէտ անհասանելի էր այրն՝ սակայն պատճառ բարեաց հանգիստուոր չնորհի սուրբ եղբայրանոցիս լինէր»: Աստուածատուրը գրչին օգնել են «Անդրէ գծող եւ ձեռնասուն մանուկ մեր» եւ «Առաքեալ համբակ քահանայ, զի յուզս աշխատեցաւ ի սպասուորութիւն գըրոցս» (\*):

Հայր Պետրոսի արձանագրութիւնը (Յաւել. Ա. 39, պատկ. 125) գտնուում է մեծ տաճարի հարաւային պատին, յետոյ շինուած ժամատան կամ գաւթի պատը ծածկել է տողերի առաջին բառերը, դորա հետ եւ թուականը (\*\*). բայց մենք կարող ենք արձանագրութեան մօտաւոր թիւը որոշել ճշգրտութեամբ՝ այնտեղ յիշուած անձնաւորութիւնների ժամանակներով և արձանագրութեան թուականի վերջին տասի մնացորդով. գրուած է այն «ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի և ի թագաւորութեանն Գաւթի». հայր Պետրոսը «եւ եղբայր իւր ար. Յուսէփ եւ Սարգիս կրանաւոր» իրենց միաբան ուխտի հետ Աղուանից Ստեփանոս կաթողիկոսին սրտ թիւ պատարագներ են սահմանում (այդ մասը ժամատան պատի տակ) բոլոր եկեղեցիներում «ի տաւնի առաքելոցն Գաւթի, Պետրոսի, Յովհաննու»: Այստեղ յիշատակուած Տէր Գրիգորիսը կարող է Գրիգոր Գ. Պահլաւունին լինել (1113-1166) կամ Գրիգոր Գ. Տղայ (1173-1193). Վրաց թագաւորը Գէորգի III-ն է (1156-1184), իսկ Ստեփանոս Աղուանից կաթողիկոսը զահակալել է ըստ Գանձակեցու 1155-1191 թուականը (\*\*\*), ժամանակակից վերո-

յիշեալ կաթողիկոսներին եւ թագաւորին: Բայց արձանագրութեան թուականի վերջին մնացորդը «ասն» ցոյց է տալիս, թէ նախընթաց հարիւրաւորի հետ պիտի լինէր «ի վեց հարիւր տասն», որով կը ստանանք 1161 թիւը. շատ շատ կարող էր նոյն հարիւրաւորի և տասնաւորի հետ լինել 1-5 միաւորներից մէկն ու մէկը, այսինքն «մի եւ տասն, երկու եւ տասն» եւ. . ., թէեւ չէր լինի այդ կանոնաւոր եւ սովորական. բայց այդպիսի գէպըում էլ արձանագրութեան թուականը հաստատուն կերպով պէտք է նշանակել 1161-1166, երբ կենդանի էր Գրիգորիս Պահլաւունին. հէնց այդ ժամանակ էլ սկսուում է վանքերի և հոգևոր կեանքի վերանորոգչական շարժումը արևելեան Հայաստանում, հաւանօրէն կապուած Գէորգի III-ի յաջողութիւնների հետ (\*):

Այդ ժամանակ նորոգուած կամ վերակենդանացած վանքերից մէկն էլ Կեչառիան էր, որին ապացոյց ունինք Ս. Նշանի հիւսիսային պատին եղած ՈԺԲ (= 1163) թուի արձանագրութիւնը, որով Վարդմբել ոմն գնում է «զՄեղտինոյ էգոյն չարեքն և ետու ի Սբ. Գրիգորս». սպասուորները տարին երկու ժամ են նշանակում նրա համար (Յաւել. Ա. 40): Հայր Պետրոսի ժամանակն էր նոյնպէս, որ «Պատրոն Վարդերևանո» տալիս է «ի Սբ. Լուսաւորիչս» իւր հայրենի Ձմիկա կոչուած այգին, ստանալով տարին ութ պատարագ, չորսը իրեն Վարդին, իսկ չորսը Անիարին, որ Վարդի կինը պիտի լինի (Յաւել. Ա. 41. պատկ. 126): Նոյն Հայր Պետրոսն է յիշատակուած նաև ժամատան ձախ աւանդատան զրան մօտ եղած արձանագրութեան մէջ, ոմն Տէր Բարսղի հետ, որին Տեառնընդառաջի օրն են ժամ յատկացնում, իսկ Պետրոսի և . . . (փըչացած, պիտի լինի «Պաւղոսի») տօնը Հայր Պետրոսին (Յաւել. Ա. 49): Թէպէտ այս արձանագրութիւնը ժամատան պատին է փորագրուած, իսկ ժամատան շինութիւնը վերջաւորուած է ամենայն հաւանականութեամբ 1214 թուին, բայց այդ հանգամանքն արգելք չէ մեր ենթադրութեան համար, որովհետև կտեսնենք, որ 1214-ից առաջ թուագրուած արձանագրութիւններ ունինք նոյն ժամատան պատի վերայ: Այստեղ յիշատակուած Տէր Բարսղը Բճնիի եպիսկոպոսն է հաւան-

(\*) Ալիշան, Այրարատ 261: Յիշատակարանի ամբողջութիւնը Հայպատում 399:

(\*\*) Մեթոքը Արքեպիսկոպոս Սմբատեան իւր Գեղարքունիքի մէջ եր. 351, թուական է նշանակում «ՆԿԳ (= 1114. տպ. 1116)», որ անկարելի է, որովհետև այդ ժամանակին միանգամայն անհամապատասխան են արձանագրութեան մէջ յիշուած անձնաւորութիւնները: Հաստատ կարող ենք ասել, որ ոչ մի թուական չի երևում արձանագրութեան սկզբում, այլ ծածկուած է պատի տակ (տ. պատկ. 125):

(\*\*\*) Կիրակոս Գանձակեցի, Ղուկ. հրատ. Թիֆլիս, 1909, եր. 189-90: Նորա մասին յիշատակութիւն ունինք Խոսրով Գանձակեցու վկայաբանութեան մէջ, որ նահատակուել է ՈԺՁ = 1167 թուին «ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի եւ Ներսիսի հարազատ եղբարց Հայոց մեծաց, եւ տանն Աղուանից տեառն Ստեփանոսի եւ տէր Յոհանիսի եպիսկոպոսի քաղաքին Գանձակայ», Արարատ, 1896 Գեղտ., հրատ. Գալուստ Տէր Միքայէանի: Ապա 1174-5 թուին Գրիգոր Տղայի և Տաւէտըրզու թղթակցութեան մէջ, նա ամբաստանուած էր Աղուանից եպիսկոպոսների և Խաչենի իշխանների կողմից Գրիգոր Տղայի. վերջինս Տաւէտըրզուն գրած նամակի մէջ բացատրում է ամբաստանութեան էութիւնը և իւր արած կարգադրութիւնը, եւ խորհուրդ է հարցնում, «թէ զի՞նչ պարտ իցէ առնել առ այս գործ»: Տաւէտըրզին խորհուրդ է տալիս սիրով անօրինել գործը, ինչպէս և սկսել էր: Արա-

րատ, 1893, 238 և չ. 325: Յօգուածագիրն է Ա. Տէր-Միքէլեան: Նոյն Ստեփանոս կաթողիկոսը մի արձանագրութիւն ունի Այրիվանքում 1181 թուականից. նա էր, որ 1184 թուին զրգեց Գոջ Մխիթարին զրել Դատաստանագիրքը (տ. Բաստամեանի հրատ. 1880 թ. եր. 17-18 և յիշատակարանը եր. 73), 1179 թուին մասնակից Հոռովկայի Ժողովին (Օրմանեան, Ազգապատում եր. 1467):

(\*) Վահրամ զաւրա(վար) իշխ. Վանաց իշխան — տեղից գատելով որդի Պատրոնկան 1167 թ. օգնում է Թեղենեաց վանքի հրաշալի դաւթի շինութեան: Նոյն թուին Նիգ գաւառի Աստուածընկալի վանքն է նորոգուում. «Տէր Գրիգոր» և մի քանի վանականներ արձանագրում են, «հաստեցաք (ս) զուխտ միաբանութե. հոգոց մերոց . . . »: Նոյնը նկատում ենք և ուրիշ վանքերի նկատմամբ: